



Holy Trinity Armenian Church

14 Woodlawn Avenue West, Toronto 7, Ontario — 923-0081

Jirayr Tashjian Pastor

Հովուական Պատգամ

Միրելի եւ հարազատ զաւակներ եւ ծխական անդամներ
Ս.Շրրորդութիւն Հայց.Առաք.Եկեղեցւոյ,

Ամէն բանէ առաջ մեր սրտի խորերէն փառք կու տանք մեր Երկնաւոր
Հօր՝ մեր հայրերուն Աստուծոյն, որ մեզի կեանք է պարզեւած ինչպէս
նաեւ սքանչելի կարելիութիւններով եւ զեղեցկութիւններով լեցուն
այս աշխարհը: Հայր մը որ տակաւին այնքան սիրեց մեզ որ մեզի դրկեց
իր Միածին Որդին, բերելու մեզի երկնային ու հոգեւոր լոյս,ինչպէս
նաեւ մեր աշխարհային մեղքերէն փրկուելու ուղին:

Փառք կու տանք նոյնպէս հիմնարկութեանը եւ զոյապահպանմանը
համար մեր բազմադարեան,անաղարտ,առաքելական Ս.Եկեղեցւոյ,որուն
մէկ անբակտելի մասնիկն ենք մենք, Թորոնթոյի Ս.Շրրորդութիւն Եկեղեցւոյ
շուրջ համախմբուած Հայց.Առաքելական Եկեղեցւոյ զաւակներս:

Այսօր, որպէս Հոգեւոր Հովիւ այս Եկեղեցւոյ սիրով կ'ողջունեմ
Ձեզ թուրդ եւ ի թուր սրտէ կը մաղթեմ որ այս պատկառելի ժողովը
յանգի արդիւնաւոր,դրական ու շինարար որոշումներու եւ լուծումներու:

Անցնող տարին մեր Եկեղեցւոյ եւ համայնքին համար եղաւ ուրիշ նշանա-
կալից տարի մը: Շնորհիւ պատուարժան ծխական խորհուրդին, եւ եկեղեցւոյս
յարակից ու աջակից մարմիններուն, կազմակերպութիւններուն ու զոյգ
դպրոցներուն, ինչպէս նաեւ անձնուէր ու զոհաբերուող ազգայիններու,
մենք որպէս եկեղեցի ու համայնք կանգուն մնացինք ու մեր ներկայ
իրականութենէն մեզի պարտադրուած հարցերուն փորձեցինք տալ պատշաճ
լուծում ու առնել անհրաժեշտ նոր քայլեր,որոնց մասին քիչ ետք հանգամա-
նօրէն պիտի անդրադառնայ պատուարժան ծխական խորհուրդի ընդհանուր տեղե-
կագիրը: Անկասկած որ ոչ միայն մեր անհատական կեանքերը այլ նաեւ մեր
կեանքը որպէս համայնք այս փերուն վրայ ստիպուած է դիմագրաւել նոր
ԿՊ ու հրամայական պահանջներ:

Այս առթիւ թող թոյլ տրուի մեզի յիշեցնելու ու կրկին ու կրկին
շեշտել որ այս պահանջներուն ու հարցերուն դիմաց մեր զործունէութիւնն





Holy Trinity Armenian Church

14 Woodlawn Avenue West, Toronto 7, Ontario — 923-0081

Jirayr Tashjian *Pastor*

ու աշխատանքը անպայման որ պէտք է ըլլայ ներդաշնակութեամբ, համագործակցութեամբ, համերաշխութեամբ, փոխադարձ սիրով ու յարգանքով, քայց նաեւ անկեղծ ճիշտութեամբ: Ժիզ մը, որ համագային է, որուն մէջ իւրաքանչիւրս ունի իր գիտակից բաժինը: Զմոռնանք որ ՄիՈՒԹԻԻՆԸ ԶՕՐՈՒԹԻԻՆ Է:

Մեզի համար անհուն ուրախութիւն ու երջանկութիւն է տեսնել որ Թորոնթոյի պատկան մարմիններ, ինչպէս նաեւ մեծ թիւով ազգայիններ ոչ միայն մտահոգուած են մեր եւ մեր նոր սերունդի հայապահպանումով, այլ գործնականի անցնելով անհրաժեշտ քայլերը առած ու միջոցները ապահովելու վրայ են այս ուղղութեամբ: Մենք, կ'օրհնենք այս շինարար քայլերը ու այսօրինակ ունենալ քայլ: Բայց ինչպէս շեշտեցինք միշտ ու միշտ անհրաժեշտ է համագործակցութիւնը, որովհետեւ հայապահպանումի հարցը չի մտահոգեր մէկ անձ, մէկ խումբ, կամ մէկ միութիւն կամ կազմակերպութիւն մը միայն: Անիկա անխտիր մեր բոլորին մտահոգութիւնն է ու կ'արժէ որ բոլորս միասնաբար ու համագործակցաբար անոր նուիրուինք ու գտնենք ազդու, ճիշդ եւ մնայուն լուծումներ, ընթացքներ, եւ գործելակերպեր:

Ինչ է սակայն հայապահպանումը: Մեզի համար այդ կը նշանակէ Հայ Եկեղեցւոյ կենսունակութիւն, Հայ Եկեղեցւոյ հաւատք ու Հայ ժողովուրդի պատմութեան եւ առաքելութեան գիտակցութիւն: Հայապահպանումը կը նշանակէ հայերէն խօսիլ, հայերէն երգել, հայօրէն մտածել ու զգալ: Հայապահպանում կը նշանակէ մեր նոր ու մատղաշ սերունդի փրկութիւնը ու ծացումէ, օտարացումէ եւ սպիտակ ջարդէ:

Սիրելիներ, մեզմէ իւրաքանչիւրին բարոյական անխարդախ պարտքն է նուիրուիլ, գիտակցօրէն նուիրուիլ, մեր ամբողջական ուժերով եւ կարելիութիւններով հայապահպանումի սրբազան գործին:

Յաւէտ թող անսասան մնայ մեր Առաքելական Ս.Եկեղեցին իր Մայր Աթոռ Ս.Էջմիածինով եւ նուիրապետական աթոռներով:

Թող անվերջ ապրի հայ ժողովուրդը Մայր Հայրենիքի եւ Սփիւռքի մէջ, իրագործելու համար նախախնամութեան կողմէ իրեն սահմանուած սրբազան առաքելութիւնը:

Յաջողութիւն այս ժողովին եւ օրհնութիւն Ձեր բոլորին:

Յունուար 25, 1970

Ժիրայր Վրդ. Թաշճեան Այրովի



Jirayr Tashjian